Բ. ՀԱՏՈՐ ՏԵՏՐ 23

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇԱԲԱԹ 20 ՀՈԿՏ. 1906. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Ի ՆՊԱՍՏ
ԿՈՎԿԱՍԻ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐՈՒ ՀԱՆԳՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Վսեմ. Բարթող փաշայի և ազն. Գրիգոր էֆ. Մելկոնեանի նախաձեռնութեամբ տեղի ունեցած հանգանակութիւնը մինչև հիմակ հասած է 599 Եգիպտական ոսկի և 53 ու կէս ղրուշ։

Այս գումարէն 450 եգ. ոսկի առաջին անգամ և 140 եգ. ոսկի երկրորդ անգամ ղրկուած է վեհ. Կաթողիկոսին։

Նոր վերափոխութիւնը 9 սեպտ. թուականի կոնդակով մը, ուղղեալ առ վսեմ. Բարթող փաշա, յուզեալ շեշտով շնորհակալութիւն կը յայտնէ 450 ոսկիի նպաստին համար և կ'ըսէ.

«Արդ՝ այսու հայրապետական կոնդակաւ մերով յայտնելով զփաշուրթն գոհունակութիւն մեր վասն սրտաբուխ նուիրաբերութեանդ, օրհ-

նեմք զվսեմափայլութիւն ձեր, զպատուական ձեռնարկողս հանգանակութեանդ և զվերմերանդ և զբարեպաշտոն նուիրատուս, զորոց զնախնեացն մերոց զբարեպաշտական զառագինական զդացմունս յանձնիս իւրեանց կրեալ տեսանեմք։»

Հանգանակութիւնը տակաւին քիչ մը ժամանակ ևս պիտի շարունակուի

Կը յուսանք թէ անոնք որ Եւրոպայ գըտնուելով չէին կրցած մասնակցիլ այս բարենպաստակ գործին և որոնք հետզհետէ կը վերադառնան Եգիպտոս, պիտի փութան իրենց բաժինը բերելու։

ՆՈՐ ՀԻՒՐ ՄԸ

Երկու շաբաթէ ի վեր Մոսքուայէն Ալեքսանդրիա հասած է մեր բարեկամը Տ. Արտաշէս Նեստուրեան։ Տ. Նեստուրեան Կեդրոնականի նախկին աշակերտ, հինգ տարի առաջ Բարիզի մէջ վկայական ստացած է կամուրջներու և խճուղիներու բարձրագոյն վարժարանէն (Էքոլ տէ Բոն Զէ Շօսէ) և յետոյ պաշտօնավարած է «Պէթն Արմէ» շինութեանց տան մէջ Բրբև երկրաչափ և ճարտարագէտ, թէ ի Բարիզ և թէ ի Մոսքուա։

Տ. Նեստուրեան այժմ դիտաւորութիւն ունի հաստատուելու Եգիպտոս ուր վստահ ենք թէ փայլուն ապագայ մը իրեն կը սպասէ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԳ

Եթէ տժգոյն այն պատուելին
Ածխավաճա՞ռ, ելլէ իմ դէմ,
Ցուցունէ ծայրն ինձ աւելին՝
Գիտցէ՛ք որ դեռ տնօրէն եմ։

Վարժարանէն չմտած ներս
Եթէ յանկարծ՝ բախտէս նսեմ
Շոգիանան աշակերտներս
Գիտցէ՛ք որ դեռ տնօրէն եմ։

Թէ Ցանձնախումբն Պետրոսովին
Գայ պաշարել դպրոցին սեմ,
Մեզ մատնելով տղոց սովին
Գիտցէ՛ք որ դեռ տնօրէն եմ։

Սպառնալիք, յոդուած, Ղուկաս
Գահիրէէն թէ Ազատ Բեմ
Գլխէս ընէ միշտ անպակաս
Գիտցէ՛ք որ դեռ տնօրէն եմ։

Եթէ Մեսրոպն այն Նորատունկ
Զիս ուրանայ Ցուդայագէմ
Զբուրվառէ դիմացը խոնկ
Գիտցէ՛ք որ դեռ տնօրէն եմ։

Թէ սանահարս Ե. Սրմաքէշ
Սպառնալից ձայնով դժխեմ
Ռակա, գոչէ. կ'ըսեմ, «Մալէշ,
Դարձեալ ես ձեր տնօրէնն եմ.»

Թէ վարժապետք ու վարժուհիք
Այդ երկուքին բռնելով դեմ
Ըլլան ամէնքն ալ «դասալիք»
Գիտցէ՛ք որ դեռ տնօրէն եմ։

Եթէ մարդիկն հրաժարերդակ
Որ տղայ ունին ու խոժոռ դէմ
Ինձ դէմ կազմեն զօրաբանակ
Գիտցէք որ միշտ տնօրէն եմ։

Թէ բանիքներն քարտուղարին
Ձեռքերուն մէջ նուրբ ու խոհեմ
Լան ու կոծեն ամբողջ տարին,
Գիտցէք որ դեռ տնօրէն եմ։

Իսկ թէ Բարթողն այն Աբրահամ
Տապաստ իյնայ, ինչպէս իւր վէմ
Ու վերջանայ խաղն այս անհամ
Ո՞հ այն ատեն տնօրէն չեմ։

ԵՄ

ԴՈՒՆՓԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Պոլսոյեան վարժարանի դռները փակ կը մնան մեծ պահքի խորանի մը պէս և պաշտօն եաներու ամսականները կը շարունակ ն բանիլ ինքնաշարժ մեքենաներու կանոնաւորութեամբ։

Հոգաբարձութեան պէս բան մ. կազմուելու վրայ էր, երբ վերջին վայրկեանին ջուրը ինկաւ։ Յետոյ «Բլէպիսիթ»ի մը խօսքը եղաւ, նաբոլէոն-

եան դրութեամբ բան մը։ Այսինքն որոշուեցաւ ծնողքներու քուէին դիմել, հասկնալու համար թէ Սմիրնայ Բիւրատը կ'ուզե՞ն թէ ո՛չ։ Այդ ալ չգալեց. տպա Բարթող փաշա նոր հոգաբարձութիւն մը կազմեց զոր ծնողքները չընդունեցին. ծնողքները հոգաբարձութիւն մը կազմեցին զոր Բարթող փաշա չընդունեց։ Տ. Արամ պէյ Արշակեան իբրև լիազօր դեսպան բանակցութիւններ սկսաւ գպրոցական ցանձնախմբին եւ ծնողքներու հետ, որոնք արդիւնք մը չունեցան։ Վերջապէս այս շաբթու ալ, ինչպէս արդէն Հոգւոյն Սրբոյ ներշնչմամբը գուշակած էինք, կարգադրութիւն մը չեղաւ վարժարժարանին մասին։

Սակայն մի՛ յուսահատիք, քիչ մըն ալ համբերեցէ՛ք և ամէն բան կարգի պիտի մտնէ։ Ա՜հա՛ Արթին պէյ Բէիղեան այսօր կը հասնի Եւրոպայէն, Պօղոս փաշան ալ քանի մը օրէն կուգայ, Միհրան խան Գալֆայեանն ալ սնտուկները կապելու վրայ է եղեր։ Շատ հաւանական է որ Ալեքսանդրիոյ Մեսիանները խմբովին հոս պիտի գտնուին երկու շաբաթէն։

Ու այն ատեն Ալեքսանդրիոյ ազգային խնդիրները վերջնականապէս պիտի կարգադրուին, ա՛լ Խնամանկալութիւն, ծնողք. ցանձնախումբ, Սահմանադրական և Բարթողեան իրենց վրանները պիտի քաշուին և «Ազատ Խօսք» պիտի ըս-

տիպուի դադրիլ, գրելիք նիւթ մը չունենալուն համար։

Եւ Առաջնորդ հայրն ալ հիւանդանալու պատճառ մը չունենալով թուրվի պէս առողջ պիտի ըլլայ։

ՄԻՔԷԻ ՍԻՐԱՐԿԱԾԸ (3)

(ԵՐԳԻԾԱԿԱՆ ՎԻՊԱԿ)

Ա.

(Շար. 22րդ թիւէն)

-Այո՛, կրկնեց Մարտիկ ես ալ բուռն միջոցներու կողմնակից չեմ, աղէկ բան մը մտածենք։

-Աւելի բարոյական վրէժխնդրութիւն մը, շարունակեց Տիրան, սանկ բարոյական հարուած մը որ ուղղակի սրտին զարնէ, զինքը խայտառակէ ամէնուն քով Սրբուհիին ատելի դարձնէ իր անձը և վերջապէս բոլոր հրապարակին ծաղրու ծանակ ըլլալով, ստիպուի ինքնաբերաբար հրաժարիլ այդ ամուսնութեան խորհրդէն և ասպարէզը քեզի ձգէ. . .

-Աղէկ, չա՜տ աղէկ, գոչեց Միքէ խանդավառուած հիանալի կը խօսիս, բայց միջո՞ցը. ի՞նչ կերպով պիտի հասնինք մեր նպատակին։

-Միջոցը ես ունիմ, ըսաւ հանդիսաւոր կերպով մը երիտասարդ խմբագիրը, հաստատ, ապահով միջոց մը։

Միքէ աղաչաւոր նայուածք մը ուղղեց իր բարեկամին, արդեօք անկե՞ղծ կը խօսէր, արդեօք ք.ՃԼՆ կը խնդար։ Ամէն պարագային ինքզինքն պարտաւոր զգաց

առանց Տիրանի կողմէ նոր հրամանի մը, երեք գարեջուր ապապրել նորէն ու սիկառէթ մը հրամցնել իր հնարամիտ ընկերոջ։

Տիրան սիկարէթը վառեց, քանի մը անգամ ուժով քաշեց և ծուխը դէպի վեր ուղղեց, յետոյ, միշտ հանդիսաւոր յեշտով մը,

- Ահա միջոցը, ըսաւ, աղուոր խմբագրական մը կը գրեմ թերթիս մէջ, ուր անյարմար ամուսնութիւններէ ծագած ընտանեկան դժբախտութիւնները մութ գոյներով նկարագրելէ ետքը, առանց անուն տալու, սակայն խիստ թափանցիկ կերպով կը ներկայացնեմ Սարգիս էֆէնտին, այդ կոչտ ու կոպիտ հարուստ վաճառականի տիպարը, որ իր ոսկիներուն ապաւինած անպատկառութիւնը կ'ունենայ Սրբուհիի պէս զարգացած, նուրբ ճաշակի տէր, գեղեցիկ աղջկան մը հետ նշանուելու, յետոյ կը յարձակիմ աղջկան ծնողքին դէմ, միշտ առանց անուն տալու, և զիրենք կը բաղդատեմ անխիղճ ոճրագործներու հետ, Սրբուհիին ալ կ'ակնարկեմ, իբրև աննկարագիր աղջիկ մը, կամ նոյնիսկ իբրև հասարակ կին մը որ դրամի փոխարէն իր մարմինը կը ծախէ ու պարկեշտ ու զարգացած երիտասարդի մը սէրը կը մերժէ. . . հէ՞ ինչ կ'ըսէք ասոր, սոսկալի հառուած մը չըլլա՞ր Սարգիս էֆէնտիին համար. . . տեսա՞ր մի վրէժինդրութեան լաւագոյն ձեր արիւնի տեղ՝ մելան, դանակի տեղ՝ գրիչ և առանց տոամադիք տեսարաններու։

- Հիանալի՛, սքսանչելի՛ գաղափար, գոչեց Մարտիկ, կեցցես Տիրան։

Խեղճ Միքէ այդ խմբագրական վրէժինդրութեան ծրագրէն այնքա՛ն յուզուած և յափշտակուած էր որ չէր կրնար բառ մը արտասանել և Տիրանին երեսն ի

վեր երախտագիտական եւ հիացողական նայուածքներ ուղղելով կը գոհանար։

- Խմբագրականը գրելը բան մը չէ, քանի մը ժամուան գործ է, շարունակեց Տիրան, միայն թէ թերթին բան մը վճարելու է. եթէ թերթը իմ ըլլար, անշուշտ ձրիաբար կը գրէի, մեր բարեկամական սիրոյն իբրեւ ապացոյց, բայց թերթին տէրը ես չեմ, ասկէ զատ...։

- Ինչ որ պէտք է կը վճարեմ, պատասխանեց Միքէ առանց թող տալու որ իր բարեկամը խօսքը աւարտէր, միայն թէ աղուոր բան մը ըլլայ և կարդացողը անմիջապէս հասկնայ թէ օրուն համար գրուած է։

- Այդ մասին անհոգ եղիր, այնպիսի սոսկալի բան մը պիտի գրեմ որ Սարգիս էֆէնտին փողոց ելլելու պիտի ամչնայ։

- Ի՞նչ պիտի տամ, հարցուց Միքէ։

- Ուրիշի համար այդ տեսակ յօդուած մը հինգ ոսկիէն պակաս չենք գրեր, բայց քեզի համար հոգ չէ, տնօրէնը կը համոզեմ... միայն երկու ոսկի տուր։

- Ա՛ռ, պատասխանեց թշուառ սիրահարը երկու ոսկի գնելով սեղանին վրայ, բայց քեզ նայիմ, աղուոր բան մը... եթէ յօդուածը ուղածիս պէս ըլլա, ոսկի մը ալ հրատարակուելէն ետքը կուտամ։

- Ուրեմն ուղածէդ ալ աւելի պիտի ըլլայ։

Եւ Տիրան աջ ձեռքին մատները ժիլէին գրպանը խօթելով տարփողաբար զգուեց երկու ոսկիները։

Ցայտնի էր որ խմբագիրը տնօրէնին բարա մը տալու միտք չունէր այդ ոսկիներէն, բայց ասոի հետեւեալ օրուան համար խմբագրականի պատրաստ նիւթ մըն ալ գտած էր։

- Խմենք մէյմէկ հատ ես ու ճամբայ ելլենք, գո-

չեց ուրախութեամբ։

Քառորդ մը վերջը երեքը միասին դուրս ելան գարեջրատունէն։

Մութը կոխած էր արդէն և Միքէ սափրուած էր երթալ Պէշիկթաշ, ուր կը բնակէր։

- Երթաս քարով, Աստուած հետդ ըլլայ, ըսաւ Տիրան իր բարեկամին ուսին զարնելով թեթեւօրէն, ու երբ Սիքէ հեռացաւ, Մարտիկի թեւը մտաւ և ականջն ի վար խնդալով մրմրաց.

- Հիմակ երթանք սա երկու ոսկին ուտենք։

Երկու բարեկամները հաճելի երեկոյթ մը անցուցին։ Սանթրալի գարեջրատունը փառաւոր ճաշ մը, յետոյ Քոնքորտայի և Քրիսթալի երգեցիկ սրճարանները այցելութիւն մը և վերջապէս գիշերային հանգիստ շրջակայ հիւրասէր տուներէն մէկուն մէջ։

Աստուն կանուխ Տիրան գրպանները խուզարկեց, հինգ ղրուշ միայն մնացեր էր։

- Աստուած նորէն սայ, նորէն ինդայնէ, ըսաւ փիլիսոփայաբար, և ճամբայ ելաւ դէպի կալաթա, ուր կը գտնուէր խմբագրատունը։

Բ.

Գրասենեակին տոջն անցած՝ Տիրան կ'սլոնցար իր գրելիք խմբագրականին վրայ, մինչ անօրէնը վեր վար կը պտտէր ծխելով։

- Խմբագրականի համար նիւթ մը ունիս, հարցուց Տիրանին։

- Այո, անյարմար ամուսնութիւններու վրայ բան մը պիտի գրեմ, անվնաս նիւթ մը որ սակայն շահեկան կրնայ ըլլալ մեր ընթերցողներուն համար։

- Աղէկ, աղէկ, բայց ուշադրութիւն ըրէ որ մէջը

վեսասկար ակնարկութիւն մը չկանուի.

-Հոգ մի ըներ։

Ու երիտասարդ խմբագիրը գլուխը ծռած սկսաւ գրել։

-Բարև Մկրտիչ էֆէնտի, ըսաւ երիտասարդ մը ներս մտնելով և դէպի անօրէնը յառաջանալով։

-Ասածս բարին, էֆէնտիս, պատասխանեց այս վերջինը նորեկին, աս ինչ հով փչեց։

-Գիտէս ա՞ մեր էֆէնտին նշանուեցաւ, ըսաւ ներս մտնողը որ Սարգիս էֆէնտի Քըրքեալանեանի գրագիրն էր, Թերթի մը մէջ առջի օր ծանուցած էին այդ նշանու�ը բայց շատ պարզ կերպով. էֆէնտին կ'ուզէ կոր որ սունթուրլու բան մը գրուի, երկար բարակ գովեստներով. ըսի որ մեր Մկրտիչ էֆէնտիին ըսենք թող աղուոր բան մը գրէ, «Շատ աղէկ կ'ըլլայ» պատասխանեց. Թերթին ալ իրրև նուէր հինգ ոսկի ղրկեց. բայց ամէն Մկրտիչ էֆէնտի. ինծի պզտիկ չէգես, գովեստներով լեցուն, փառաւոր բան մը գրէ, դեռ հարսնիքն ալ կայ, այն ատեն հարսնիքին նկարագրութիւնը կը գրես հինգ տասը ոսկի ալ անկէ կուգայ. . . հայրէ. քեզ նայիմ։

(Շարունակելի)

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր Դահիրէի և դաւառներու այն բաժանորդներու որոնք մինչև հիմակ իրենց բաժնեգինը չեն վճարած, դիւրութիւն մը ընծայելու համար որոշեցինք եգիպտական թղթատարով հաւաքել այդ բաժնեգիններ։

Կը յուսանք որ մեր պատուարժան բաժանորդները պիտի հաճին իրենց հաշիւը կարգադրել երբ թղթատարական պաշտօնեան ներկայանայ իրենց։

Ցայտնի է որ այս ձեւով մէն մի բաժնեգինի գանձման համար պիտի սահպուինք Զուկէս ղրուշ ողջ ծախքի մը ենթարկուիլ և եթէ գլանուին բաժանորդներ, ինչ որ բոլորովին անհնթադրելի է, որոնք չուզեն պարտքերնին վճարել, ո՛չ միայն մեր բաժնեգինը կերած կ'ըլլան, այլ նաև Զուկէս ղրուշ ողջ բացէն ինչոս մը սբուած կ'ըլլան մեզ և այն ատեն ըստ Աւետարանական բանին՝ « Ցետինն չար քան զառաջինն » կ'ըլլայ։

ՍՈՒՏ ԻՐԱՒ

Վերջին լուրը, Պողոսեան վարժարանի խնդրին առթիւ, այն է թէ դպրոցական Ցանձնախումբին և մէկ քանի ծնողքներու հրաւէր ուղղուած է տեսակցութիւն մը ունենալու համար Միքայէլ պէյ Բէիզեանի հետ որ թէ՛ խնամակալ է, թէ՛ հոգաբարձու, թէ՛ աղքատախնամի անդամ, վերջապէս քիչ մը ամէն բան, ինչպէս ամէն ինքզինքը յարգող ոչնչութիւն։

Ցանձնախումբը յետ խորհրդակցութեան հաւանած է վաղը, կիրակի, առտուան ժամը 10ին,

երթալ Միքայէլ պէյի բնակարանը, մէկ քանի ծնողքներու ընկերակցութեամբ եւ լսել վսեմ. Բարթոզ փաշայի փեսին առաջարկութիւնները։

Ակէց առաջ Միքայէլ պէյ յայտարարած էր թէ «Հոգւով մարմնով կապուած է Սմբատ Բիւրատի հետ». ասիկա բաւ է ապացուցանելու համար որ վաղուան տեսակցութենէն որ եւ է գործնական օգուտ պէտք չէ սպասել։ Տարբեր բան եթէ Միքայէլ պէյ այժմ իր հոգեկան ու մարմնական կապերը խզած ըլլայ Սմբատ Բիւրատի հետ։

Շատեր կը հարցնեն թէ ի՞նչ եղաւ Շանթ յեղափոխական թերթը որուն հրատարակումը ծանուցած էինք երկու շաբաթ առաջ։

Մեր ստացած տեղեկութեանց համեմատ Շանթի հրատարակութիւնը քիչ մը յապաղած է միմիայն տպարանական դժուարութեանց պատճառաւ, դժուարութիւններ որոնք մէկ քանի օրէն պիտի բարձուին և հաւանօրէն յառաջիկայ շաբաթ լոյս կը տեսնէ յեղափոխական թերթին առաջին թիւը։

Ստացանք Ս. Բեդերսպուրկ հրատարակուող երգիծական ամսաթերթ «Սափրիչ»ի չորրորդ թիւը։ Սափրիչ Համանակէ մը ի վեր դադրած էր

կառավարական հրամանով. ուրախ ենք որ կըրկին հրատարակման արտօնութիւն կրցած է ունենալ։

Թէ արտասահմանի հայ թերթերն ու հանդէսները և թէ նոյնիսկ եւրոպական պարբերականները մեծ գովեստով կը խօսին այս տարուան Գեղունիի մասին, զոր վերջերս Վենետիկի Մխիթարեանները ի լոյս ընծայեցին և որ իրապէս գեղարուեստական հոյակապ գործ մըն է։

Ինչպէս ծանուցած էինք Գեղունիի այս տարուան վաճառումէն գոյացած հասոյթը սահմանուած է Կովկասի հայ կարօտեալներուն։

Անոնք որ կ'ուզեն այս գեղեցիկ հատորէն ունենալ, Ալեքսանդրիոյ մէջ կրնան դիմել Տ. Յ. Ղազիկեանի որ լիազօր ներկայացուցիչն է Վենետիկեան Ս. Ղազարի տպարանին։

Հրատարակուեցաւ ՇԻՐԱԿի Գրդ թիւը ճոխ ու շահեկան պարունակութեամբ։ Մեծանուն դըրագէտ Արփիար Արփիարեանի խմբագրապետութեան տակ հրատարակուող սոյն գրական և ընկերական ամսաթերթը արժանի է ամէն դրասէր հայու քով գտնուելուն։

Պօրսա՞, Պօրսա՞...

«Ազատ Խօսք»ի բիբլիոգրաֆներէն մէկը որ պաշտօն ստացած էր մասնաւորապէս հսկելու աղինադագարի միջոցին ազգային վարժարանին վարժապետներուն ընթացքին վրայ, կը հաղորդէ թէ ուսուցիչները օգտուելով առիթէն կազմած են սակարանական ընկերակցութիւն մը եւ իրենցմէ էն կարճատեւին և էն կարճահասակին պաշտօն տուած են հարկ եղած գործառնութիւնները ընել։

Իբր առաջին գործողութիւն, պարոն վարժապետ-պօրսաճին աս շաբթու ծախած է եօթը հարիւր հազար խանթար բամպակ և հինգ հազար հատ Քրէտի Ֆօնսիէ.

Ա. Զ Դ

Հայ սոմարակալ մը որ երկար տարիներ Կ. Պոլիս Ռէժիի վարչութեան մէջ պաշտօն վարած է և իր բարեբաղդ պաշտօնավարութեան վկայագրերն ալ ունի եւ չորս տարի ևս Վերին Եգիպտոսի մէջ ծանօթ առեւտրական տան մը քով իբրև հաշուակալ ծառայած է, այժմ պատրաստ է իբրև այցելու կամ մնայուն պաշտօնեայ ծառայել վաճառական տան մը մէջ։ Կարող է նաև վարել արկղակալի պաշտօն և առ այդ հարկ եղած երաշխաւորութիւնները տալ։ Գաւառներու մէջ եւս պաշտօն կը սանձնէ, եթէ պայմանները յարմարին։ Դիմել «Ազատ Խօսք»ի հասցէին։

New Victoria Hotel ԱԱՆ ՍԹԷՖԱՆՕ

ՆՈՐ ՎԻԿԹՈՌԻԱ ՕԹԷԼ Աղեքսանդրիոյ Մօտ
ՑՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Հալթ թիւ 2

Առաջին կարգի օթէլ, ժամանակորապէս չինուած, այժմու բոլոր հանդստաւէտութեան պայմաններով։ Հիանալի ճաշասրահ, սալօն, ծխասրահ։ Մասնաւոր ճաշասրահ։ Ընդարձակ պատշգամ և պարտէզ։ Ելեքտրական լոյս։ ՁԱԹԱՒՈՐ ԳԻՆ։ Թելեֆօն թիւ 370։ Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ։ Թրամվայով տասը վայրկեան Աղեքսանդրիայէն։

Ս. Ֆ. ՌԷՋԻԿ, ՏՆՕՐԷՆ

Ց. Գ.—Մասնաւոր գին կառավարական պաշտօնաներու և զինուորականներու համար։ Բոլոր սենեակներուն ծովուն վրայ կը նային։

ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՈՑ
ՕՐՊԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

Դ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
ԶԱՅՍՈՒՅՍԻՆ
Գրքապահ եւ Հիւրանոցի Վարչութեան Նիւ. ՏԷՖ.

15 RUE STAMBOUL 15
ALEXANDRIE

Այս աշխատանոցին մէջ կը պատրաստուին Գրքեր։ Ի Նիկել դուռի Բլոքներ։ Քաղաքեալ. Գլխէն, Ոգղպալ Գիրքեր. արծաթէ և ոսկի մանկրամներ, Քամփաներ եւ. Զանգերոցի և կալենդարների փոքրաթերիկ գործեր։

Տպարանական ամէն տեսակ գործեր հայ և օտար լեզուներով։ Հարսանեկան հրաւիրագրեր. այցեքարտներ. նամակագրութիւններ. տետրակներ. հասցեագրեր. մանդատներ. հայերէն պրոշիւրներ. գիրքեր եւն։

Մասնաւոր խնամք ճաշակի և մատուցման։ Ցաւոտաց գին։

Այս աշխատանոցը ընդհանրապէս կը յանձնարարենք Աղեքսանդրիոյ. Դարձրէի և բոլոր եկեղեցական ազգաբնակ. վստահանալով թէ հոն եղած բոլոր յանձնարարութիւնները ամենամեծ խնամքով կը կատարուին և գոհ կը ձգեն ամէնն գեղեցիկագոյն ճաշակներ։

Ասար գործատուներու գիմելի տեսչ հանկարծ անգամ մը այցելել ասոր աշխատանոցը։

«ՍԶԱՏ ԽՕՍՔ» ՁԵՌԲԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Աղեքսանդրիա՝ Տ. Ց. Ղազիկեանի քով և Շէրիֆ Փաշա լրագրավաճառ Տ. Թելլալեանի խանութը։

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կօլտրն Բէօշքի քով եւ «Լուսաբեր» Թերթի գրուիչին մօտ։

Նախորդ չաբթուան թիւերը կը վաճառուին կրկին գինով։



"ԱԶԱՏ ԽՕՍՔ" ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՍԲԱԹ ՕՐԵՐԸ

Եգիպտոսի համար բաժնեգինն է

40	թիւը	40	ղրշ ՈՂՋ
20	„	20	„ „

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ	40	թիւ	10	ֆրանք
ՌՈՒՍԻԱ	„	„	4	ռուբլի
ԱՄԵՐԻԿԱ	„	„	2	տոլար

Բաժանորդագրութիւնը կանխիկ

ՀԱՏՐ. 1 ՂՐՇ · ՈՂՋ

"ԱԶԱՏ ԽՕՍՔ" ի համար բաժնեգին կամ որ և է գրութիւն պէտք է ուղղել հետևեալ հասցէին՝

Հ. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPTE

Մանուցումներ կընդունուին մասնաւոր պայմաններով։

Պատասխանատու տպագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպագր. Փարգ. Դ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա